

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Արևելագիտության ամբիոն

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ – 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I.

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ.....3

1. Ընդհանուր դրույթներ.....4
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը4
 - 2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները4
 - 2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները.....6
 - 2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը 8
3. Դասընթացները և կրթական մոդուլները.....8
4. Կրեդիտների հատկացումը.....9
5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները.....9
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը.....10
 - 6.1. Համակարգի հիմնադրույթները 10
 - 6.2. Գնահատման մեթոդաբանությունը 11
 - 6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը 14
 - 6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը15
 - 6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը16
 - 6.6. Ուսման առաջադիմությունը 18
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը..... 19
8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը21
9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը 23
10. Դասընթացների տեղեկագիրքը 23
11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը..... 24
12. Կրեդիտների փոխանցումը 27
13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը 28
14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները 28
15. Եզրափակիչ դրույթներ..... 29

ԲԱԺԻՆ II.

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 30

Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ..... 30

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը..... 31
2. Ծրագրի բովանդակությունը 32
 - 2.1. Ուսումնական կառուցամաս 32
 - 2.2. Հետազոտական կառուցամաս 35

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ..... 37

1. Տեղեկագրի նպատակը..... 38
 1. Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ..... 39
 2. Լրացական դասընթացներ 41
 3. Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ.....42
 4. Կամընտրական դասընթացներ 60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....65

I ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (այսուհետ՝ Կենտրոն) մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը

2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Համաեվրոպական ECTS¹ կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի Բարձրագույն կրթության համակարգում և գործում են Կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրում:

1. *Կարողությունը* գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:

2. *Կրթական արդյունքն* այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

¹ Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

3. *Կրթական (ուսումնական) մոդուլը* ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

4. *ECTS կրեդիտը* դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5. *ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.*

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. *Կրեդիտային համակարգը* ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. *Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը* միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

8. *ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.*

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) *կրեդիտների փոխանցում.*

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատաձևավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի ուսումնառության անհատական ծրագրի օգնությամբ:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

2.2.2. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատաձևավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

2.2.3. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաձևավալը

1. Կենտրոնում մագիստրոսի կրթական աստիճաններում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լսարանային լրիվ բեռնվածությունը 14-18 ժամ է²:
5. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
6. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:
7. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաձևավալը՝ 120 կրեդիտ է:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

² Առանց լրացական դասընթացների

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
 - ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
 - բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսի կրթական ծրագրում, ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

4. Կրեդիտների հատկացումը

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը էլնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է, կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Կենտրոնի ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն:

2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ *ընդհանուր դասընթացների կրթամասից*, և 48 կրեդիտ՝ *հետազոտական կառուցամասից (ներառյալ՝ մագիստրոսական թեզը)*:
3. Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և կամընտրական դասընթացներով՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար):

6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

6.1. Համակարգի հիմնադրույթները

1. Կենտրոնում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն

աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունաբար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

- ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
- բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),
- գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,
- դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

բ) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

6.2. Գնահատման մեթոդաբանությունը

6.2.1. Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները եզրափակիչ գնահատումով դասընթացներ են:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն, որոնցից առնվազն մեկն անց է կացվում ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա: Եզրափակիչ քննության ձևը դասընթացը

կազմակերպող դասախոսի առաջարկությամբ հաստատում է ամբիոնի վարիչը:

2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
 - ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության ակտիվության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության Գ_{մաս.} միավորը որոշվում **աղյուսակ 1-ում** բերված սանդղակի չափանիշներին համապատասխան (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա).

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
91-100	2
81-90	1,5
71-80	1
61-70	0,5
< 60	0

Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի

15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝

$$[1 - 15/32] \times 100\% = (1 - 0.47) \times 100\% = 53\%$$

Համաձայն աղյուսակի՝ $Q_{մաս.} = 0$ միավոր:

Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 12 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝

$$[1 - 12/(64 - 4)] \times 100\% = (1 - 0.2) \times 100\% = 80\%$$

Համաձայն աղյուսակի՝ $Q_{մաս.} = 1$ միավոր:

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք և բանավոր ներկայացում) արդյունքներից ($\Sigma P_{ընթ.}$), որոնց հատկացվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է 8,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($P_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + \Sigma P_{ընթ.} + P_{եզր.} :$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով) ³.

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	Գ _{մաս.}	Ք _{ընթ.1}	Ք _{ընթ.2}	Ք _{եզր.}	Գ _{արդ.}
Միավորը	2	8		10	20

3. Ընթացիկ գնահատման ձևերի միջև միավորների բաշխման քանակական հարաբերակցությունը որոշում է դասընթացը վարող դասախոսը, ինչը պարտադիր կերպով արձանագրվում է մագիստրոսական ծրագրի ուսանողի ուսումնառության ուղեցույցում զետեղված դասընթացի նկարագրության մեջ (դասընթացի ընթացիկ գնահատման կառուցվածքի փոփոխություն ուղեցույցի հրապարակումից հետո չի թույլատրվում):
4. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն ուսումնական կառուցամասի բաղկացուցիչ դասընթացների, (բացի լրացական դասընթացներից) գնահատման համար: Հետագոտական կառուցամասի մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ սույն կարգում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման

³ Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0.5 է

մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ամբիոնները, և հաստատում է ուսումնական մասի պետը: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական մաս:
3. Ընթացիկ քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում:
4. Լրացական դասընթացներից ընթացիկ ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր 8 շաբաթը մեկ: (Ընթացիկ ստուգումն անց է կացնում տվյալ առարկան դասավանդող դասախոսը՝ առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին (ուսանողը չի ազատվում դասերից):
5. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում:
6. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է ամբիոն:
7. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ ուսումնական մասի պետին:

6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. Կենտրոնում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»

0-7	«Անբավարար»
0	Չներկայացած
-	«Ստուգված»/ «Չստուգված»

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը օրինակ՝ 18 (գերագ.):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*⁴ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) վրա:

6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Կենտրոնի ուսումնական մասը, ամբիոնի հետ համատեղ յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*⁵, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

⁴ Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը

⁵ Ակադեմիական տեղեկագրի օրինակը կցված է սույն կարգին (հավելված 3):

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները⁶

- գումարային կրեդիտների քանակը,
- գնահատված կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

4. *Գումարային կրեդիտը* (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. *Գնահատված կրեդիտը* (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

ԳԿ=Σ Կրեդիտ

6. *Վարկանիշային միավորը* (ՎՄ) հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ=Σ (Կրեդիտ x Գ_{արդ.}),

որտեղ Գ_{արդ.}-ը տվյալ ուսումնական մոդուլից կամ առանձին դասընթացից ստացված արդյունարար գնահատականն է:

⁶ Տե՛ս հավելված 3 ակադեմիական տեղեկագիրը:

Օրինակ, եթե ուսանողը 5,4, և 6 կրեդիտանոց դասընթացից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12,16, և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝

$$\text{ՎՄ} = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238'300 \text{ հնարավորից } (5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20)$$

7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / \text{ԳԿ}$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝

$$\text{ՄՈԳ} = 238/15 = 15,87$$

20 հնարավորից:

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:

2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝
ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն(10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների⁷ կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):
4. *Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող* ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:
6. *Փորձաշրջանի կարգավիճակում* գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:
7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներին՝ վարկանիշային միավորներով:

7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնական մասում

⁷ Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում (համապատասխանաբար, 2-րդ ընթացիկ քննությունը՝ մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով ուսումնական մասի և դասընթացը վարող դասախոսի հետ:
5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝

$$G_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7,$$

որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա

$$G_{արդ.} = 7 + (5 - 2) = 10$$

7. Եթե մագիստրոսական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5÷7 միավորի տիրույթում, ապա

թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:

8. Ուսումնառության 1-ին կիսամյակում 2 դասընթաց չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում անհատական ծրագրով կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում՝ շարունակելով ուսումը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած ուսանողը ազատվում է Կենտրոնից:
9. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
10. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերակսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթերթը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ կամընտրական դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը բերված է հավելված 1-ում:
3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միասին լրացնում է կամընտրական դասընթացները ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում ամբիոն:

4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի կամ ընտրական դասընթացների ուսանողների գրանցումն իրականացվում է համապատասխան ամբիոնում: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի 2-րդ շաբաթվա վերջը: Սահմանված վերջնաժամկետից հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում՝ նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը բերված է *հավելված 2-ում*:
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողում, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրականացման ընթացակարգը հետևյալն է.
 - ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,
 - տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 4-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պետք է ստանա նաև դասընթացը վարող դասախոսի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը,
 - ուսանողն իր ընտրացանկում նոր դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը:
8. Նախորդող կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների համար ուսումնառության 1-ին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել լրացական դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման հետ:
9. Ուսանողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:

10. Կենտրոնը իրեն իրավունք է վերապահում հանել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ:

9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը կազմում և ուսանողներին է տրամադրում տվյալ կիսամյակի հետազոտական աշխատանքների պլանը (ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսվող գիտակրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը):
2. Ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարողականի ստուգման համար կիրառվում է ատեստավորում: Գիտական ղեկավարի սեմինարի, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկաների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը, որը լրացված ատեստավորման թերթիկն անձամբ հանձնում է ամբիոն:
3. Ուսումնառության 1-ին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը 2-րդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսված անավարտ աշխատանքը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ հետազոտական մոդուլով չատեստավորված ուսանողն ազատվում է Կենտրոնից:

10. Դասընթացների տեղեկագիրքը

1. Կենտրոնը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է Կենտրոնի դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված է էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է:
2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.
 - ա) ընդհանուր տեղեկություն Կենտրոնի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներբուհական հիմնական կանոնները

(հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ՝ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական/լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը

1. Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական ատենախոսության կատարումով և պաշտպանությամբ:

2. Մագիստրոսական ատենախոսության գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում: Համապատասխան ընթացակարգը ներառում է.
- ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագրի ատենախոսությունների ղեկավարների հետ,
 - գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,
 - մագիստրոսական ատենախոսության համաձայնեցված թեմաների և գիտական ղեկավարների թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը և հրամանագրումը:
3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված մագիստրոսական թեզի թեմայի առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) քննարկման և հաստատման համար, որն իրականացվում է 2-րդ կիսամյակում: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի թեմայի բնագավառում առկա իրադրության նկարագրությունը, աշխատանքի նպատակը, ածանցյալ խնդիրների առաջադրումն ու սահմանումը, դրանց հավանական լուծումները, հետազոտական մեթոդները և գրականության ցանկը: Ատենախոսական աշխատանքի կատարումը շարունակվում է ուսուցման 3-րդ և 4-րդ կիսամյակներում:
4. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
- ա) մագիստրոսական թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման քննարկմանը պաշտպանությունից 4 շաբաթ առաջ: Մագիստրոսական թեզի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,
- բ) մագիստրոսական թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) մագիստրոսական ծրագրի ղեկավարի,

մագիստրանտի գիտական ղեկավարի և մագիստրանտի պարտադիր մասնակցությամբ մեկ շաբաթյա ժամկետում /առաջին շաբաթ/: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից մագիստրոսական թեզը երաշխավորվում է պաշտպանության,

- զ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում ատենախոսության վերաբերյալ գրախոսականը,
 - դ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:
5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
 6. Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
 7. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 4.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Արդիականությունը/նորույթը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6

3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
	Ընդամենը	20

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից մագիստրոսական թեզի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 4*):

12. Կրեդիտների փոխանցումը

1. Այլ բուհերից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրոսի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
2. Այլ կրթական ծրագրից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
3. Այլ բուհում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ընդունող բուհի միջև:
4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը նշանակում է ECTS-ի բուհական համակարգող, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով /անհրաժեշտության դեպքում/:

13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
 - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
 - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
 - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
 - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
 - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արևելագիտության ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Արևելագիտություն» ծրագրով.

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Լրացական դասընթացներ	0	2
Ընդհանուր կրթամաս	6	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	48	16
Կամրնորական դասընթացներ	18	6
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	3
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
ԸՆԴԱՄԵՆԸ	120	36

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	24	24	24	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	6	9	30	48
Ընդամենը, կրեդիտ	27	30	33	30	120

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

2. Ծրագրի բովանդակությունը

2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) ⁸	Կիսամյակ	Գնահատման ձևը
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-1	0	24/8/0/	I,	Մտուգարք
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-2	0	24/8/0/	II	Մտուգարք

Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *“Բնֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ”* և *“Մասնագիտության փիլիսոփայական հարցեր”*: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

⁸ Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M09	Ինֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ	3	24/8/0	I	Քննություն
16/M01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	3	32/0/0	I	Քննություն

Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամալը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝
«Արևելագիտություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարան ային	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
01/M01	Իսլամական քաղաքակրթության ուրվագծեր (միջնադար)	3	32/0/0	II	Քննություն
01/M34	“Մեծ Մերձավոր Արևելքի” վերակառուցման ծրագիրը և արդիականացման գործընթացը Արաբական աշխարհում	3	32/0/0	II	Քննություն
01/M35	Ինտեգրման գործընթացներն Արաբական աշխարհում և միջարաբական հարաբերությունների առանցքային հիմնախնդիրները	3	32/0/0	III	Քննություն
01/M06	Հին աշխարհի պատմության տեսություն	3	32/0/0	I	Քննություն
01/M07	Հին արևելյան առասպելաբանություն և դիցաբանություն	3	32/0/0	II	Քննություն

01/M08	Միջին դարերի պատմության տեսություն	3	32/0/0	II	Քննություն
01/M09	Իսլամական քաղաքակրթության ուրվագծեր (նոր և նորագույն ժամանակաշրջան)	3	32/0/0	I	Քննություն
01/M10	Համաշխարհայնացման գործընթացը. քաղաքական ասպեկտ	3	32/0/0	II	Քննություն
01/M11	Քրիստոնյա Արևելքի պատմության և աղբյուրագիտության ներածություն	3	32/0/0	I	Քննություն
01/M12	Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմության հիմնահարցեր	3	32/0/0	I	Քննություն
01/M13	Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն պատմության հիմնահարցեր	3	32/0/0	II	Քննություն
01/M14	Կովկասագիտության ներածություն	3	32/0/0	III	Քննություն
01/M15	Բյուզանդիայի պատմության հիմնահարցեր	3	32/0/0	III	Քննություն
01/M33	Ռուսաստանի պատմության հիմնահարցեր	3	32/0/0	III	Քննություն
01/M18	Կովկասի քաղաքական պատմության հիմնահարցեր (նոր և նորագույն ժամանակաշրջան)	3	32/0/0	III	Քննություն
01/M02	Քրդագիտության ներածություն	3	32/0/0	III	Քննություն

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավար ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցառումներ կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 1-ին կիսամյակի ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավարը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝

«Արևելագիտություն»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
01/M22	Արաբա-թուրքական հարաբերությունները 1907-1918 թթ.	3	32/0/0	I	Քննություն
01/M21	Օսմանյան կայսրության պատմության հիմնահարցեր	3	32/0/0	I	Քննություն
01/M25	Արաբական երկրների պայքարը անկախության նվաճման համար (1918-1946 թթ.)	3	32/0/0	II	Քննություն
01/M24	Թուրքիայի Հանրապետության պատմության հիմնահարցեր	3	32/0/0	II	Քննություն
01/M28	Արաբական երկրների պատմության հիմնահարցեր (XX դարի 40-90-ական թթ.)	3	32/0/0	III	Քննություն
01/M27	Թուրքիայի պատմության հանգուցային հիմնախնդիրներ	3	32/0/0	III	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատածավալով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջա-

նակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Արևելագիտության» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M09. Ինֆորմատիկա և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել գիտելիքներ ժամանակակից ինֆորմատիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

1.1. անհատական համակարգչի արտաքին և ներքին կառուցվածքները նաև ներքին սարքավորումների նպատակը,

1.2. ուտիլիտային ծրագրեր (paint, snapping tool, cleanup defragment և այլն),

1.3. ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները,

1.4. հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր,

2. **կհասկանա** TCP/IP արձանագրության համառոտ նկարագրությունը, արձանագրության նպատակը լոկալ և գլոբալ ցանցերում, հաշվողական ցանցերի դասակարգում, լոկալ ցանցերի տոպոլոգիա,

3. **կկարողանա կատարել** Windows XP, 7 օպերացիոն համակարգերի հիմնական տարրերի հետ աշխատանք, ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ:

Օգտագործել MS Office հիմնական ծրագրերից՝

3.1 **MS Office Power Point** ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.2 **MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝** բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.3 **MS Office Word տեքստային խմբագրիչում՝** տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում:

Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել **MS Office Excel** աղյուսակը **MS Office Word**) MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Հոդվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել՝ մասնավորապես, IEEE 2006, ГОСТ(сортировка по именам) ГОСТ(сортировка по названиям) և այլն այլ ստանդարտներով աշխատել ինչպես նաև «**Բովանդակություն**» կազմել օգտագործելով **MS Office Word** հրամաններից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համակարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, էլքի-մուտքի սարքեր: Բնֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր (Windows XP, Windows 7), հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: **Թեմա 2**՝ Համակարգային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: S2S գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Բնտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3**՝ MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 4**՝ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 5**՝ Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 6**՝ MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16/M01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)
Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կծանոթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,
2. **ձեռք կրերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,
3. **կծանոթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2**՝ Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3**՝ Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4**՝ Ռ. Դեկարտը որպես եվրոպական առաջին էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 5**՝ Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6**՝ Նեոկանտականություն: **Թեմա 7**՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8**՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9**՝ Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10**՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ, **Թեմա 11**՝ XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12**՝ Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13**՝ Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14**՝ Հերմենևտիկան որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15**՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16**՝ Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17**՝ Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18**՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն- 1-2) (0 կրեդիտ)

Շարքաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում “Արևելագիտության” բաժնի ուսանողներին ուսուցանել մասնագիտական անգլերեն լեզու՝ արևելագիտության կոնտեքստում, որն իր մեջ ներառում է համապատասխան մասնագիտական տերմինների ու արտահայտությունների,

քերականական ժամանակաձևերի ու կառուցվածքների ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ ձեռք բերած գիտելիքները ամրապնդելու և վերարտադրելու նպատակով, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ և ձեռնարկներ /տեքստերի թարգմանություն՝ անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն/: Ծրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կտիրապետի** անգլերեն լեզվի քերականական ժամանակաձևերին, կառուցվածքներին, մասնագիտական բառապաշարին, լեզվամտածողական հմտություններին, որոնք հնարավորություն կտան սովորողներին ինքնուրույն օգտվել մասնագիտական գրականությունից,
2. **կկարողանա** անգլերենով խոսել մասնագիտական և ոչ մասնագիտական միջավայրում,
3. **կմասնակցի** անգլերեն լեզվով տեղի ունեցող բանավեճերի, երկխոսությունների,
4. **կպատրաստի** ներկայացումներ /պրեզենտացիաներ/, զարգացնելու բանավոր և գրավոր խոսքը:

Բովանդակությունը.

«Մասնագիտական օտար լեզու» դասընթացը նախատեսված է ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար: Առարկան ենթադրում է ապահովել անմիջական լեզվական միջավայր ուսանողների համար, ծանոթացնել նրանց անգլերենի առանցքային քերականական կառույցներին, մասնագիտական տերմինաբանությանը, իդիոմատիկ արտահայտություններին, աջակցել լեզվամտածողության, լեզվագագացողության զարգացմանը և ստեղծել համապատասխան պայմաններ հաղորդակցության գործընթացում լեզուն կիրառելու համար: Դասընթացը հատուկ շեշտ է դնում բանավոր մասնագիտական խոսքին և նրա ավտոմատ զարգացման գիտելիքներին, որը իրագործվում է բանավոր խոսքը խթանող մի շարք առաջադրանքների միջոցով:

Մտուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Մտուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

01/M06. Հին աշխարհի պատմության տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ հնագույն և հին պատմության համեմատական ուսումնասիրման: Անհրաժեշտ է ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ստեղծման ընթացքում, մագիստրանտների մոտ ձևավորել արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների զգացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա Հին աշխարհի պատմության առարկայի նպատակը և խնդիրները, առարկայի տեղը պատմագիտության համակարգում, դրա կապը այլ գիտությունների հետ, հին քաղաքակրթությունների ձևավորման և կայացման գործընթացը, քաղաքակրթական հիմնական արժեքները,

2. կկարողանա կիրառել հին աշխարհի պատմության ուսումնասիրման մեթոդները պատմագիտական հետազոտություններում կիրառել, գիտակցել ընդհանուր և մասնավոր գործընթացները և դրանց փոխկապակցվածությունը, տեղայնացնել համաշխարհային պատմական գործընթացները,

3. կտիրապետի Հին աշխարհի պատմության հետազոտման մեթոդներին, քաղաքակրթական արժեքներին և գործընթացներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմության շրջափուլերը և պարբերացումը: **Թեմա 2՝** Քաղաքակրթությունը և նրա տարածման եղանակները: **Թեմա 3՝** Եթնոս. ժողովուրդների կազմավորման գործընթացը: **Թեմա 4՝** Պետություն. Կազմավորման եղանակները: **Թեմա 5՝** Պետության տիպերը: **Թեմա 6՝** Հին Առաջավոր Ասիայի կառավարման համակարգը: **Թեմա 7՝** Արևմտյան պետականությունների կառավարման համակարգը: **Թեմա 8՝** Կրոնը հին շրջանում: **Թեմա 9՝** Համաշխարհային կրոններ: **Թեմա 10՝** Շրջակա միջավայրը հասարակության ձևավորման և զարգացման գործում: **Թեմա 11՝** Հին պետականությունների սոցիալական միջավայրը: **Թեմա 12՝** Գիտակրթական համակարգը հին շրջանում. դպրոց, գիտություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M09. Իսլամական քաղաքակրթության ուրվագծեր (նոր և նորագույն ժամանակաշրջան) (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել իսլամի քաղաքակրթական արդի դրսևորումների, մասնավորապես քաղաքական իսլամի, իսլամական արդի հայեցակարգերի, միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի, դրանց զարգացման փուլերի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների, ինչպես նաև իսլամի քաղաքակրթական արդի դրսևորումների մասին գոյություն ունեցող տեսությունների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր անհատական գործունեության ընթացքում կկարողանա հետազոտել իսլամի արդի քաղաքակրթական դրսևորումներին վերաբերող խնդիրները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա նոր և նորագույն ժամանակաշրջանում իսլամական երկրների հասարակական-քաղաքական կյանքում իսլամի ունեցած դերակատարության մասին, նոր և նորագույն ժամանակաշրջանում իսլամի ներսում տեղի ունեցող խմորումների, տարաբնույթ հոսանքների դրսևորման մասին, կտարբերակեն քաղաքական իսլամ, իսլամիզմ, մարտնչող իսլամիզմ, սալաֆիականություն, ջիհադ, կրոնական արմատականություն եզրերն ու եզրաբանությունները, միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի ունեցած նշանակության մասին, իսլամական համերաշխության շարժման և Իսլամական համագործակցություն կազմակերպության մասին, Ղարաբաղյան հակամարտության մասին իսլամական աշխարհի օրակարգի մասին,

2. կկարողանա իրականացնել վերլուծություններ իսլամի քաղաքական և այլևայլ դրսևորումների վերաբերյալ, բնութագրել և մեկնաբանել ժամանակակից իսլամին վերաբերող խնդիրները, ուսումնասիրել և հետազոտել իսլամի քաղաքակրթական առանձնահատկությունները նոր և նորագույն շրջանում, կիրառել նշված ոլորտում ունեցած գիտելիքը Հայաստանի վերաբերյալ իսլամական աշխարհի մոտեցումները և իսլամական աշխարհի զարգացման առանձնահատկությունները սահմանելու համար,

3. կտիրապետի նոր և նորագույն շրջանում իսլամական քաղաքակրթական առանձնահատկությունների բացահայտմանը և նորովի մեկնաբանմանը, ունակ կլինեն ընկալել և հասկանալ նյութը տարբեր գիտական դիսցիպլինների տեսանկյունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Եվրոպական լուսավորչականությունը և արդիականացման գործընթացները Մերձավոր Արևելքում: **Թեմա 2**՝ Օսմանյան կայսրության փլուզումը և իսլամի դերակատարությունը եվրոպական գաղութատիրության շրջանում: Կրոնա-քաղաքական կազմակերպությունների ձևավորման գործընթացը: **Թեմա 3**՝ Մուսուլման եղբայրներ. Հասան Ալ-Բաննայից մինչև Մուհամմեդ Մուրսի: **Թեմա 4**՝ Իսլամական կրոնաքաղաքական կուսակցությունների և շարժումների ձևավորումն իսլամական աշխարհում 1980-ականներին /Հիզբալլահի և Համասի օրինակով/: **Թեմա 5**՝ Իրանի իսլամական հեղափոխությունը: Իրանի Իսլամական Հանրապետությունը և Այալլոլլա Իմամ Խոմեյնիի ֆենոմենը: **Թեմա 6**՝ Իսլամը Թուրքիայի Հանրապետությունում. անցյալը

և ներկան: **Թեմա 7**՝ Իսլամը հետխորհրդային տարածքում /Ադրբեջանի օրինակով/
Թեմա 8՝ Ջիհադական շարժումների ֆենոմենը: Ալ-Կաիդան: **Թեմա 9**՝
Պոստիսլամիզմ հասկացողությունը: **Թեմա 10**՝ Սալաֆիականություն. իսլամի
էքսպանսիան 21-րդ դարում: **Թեմա 11**՝ Իսլամական գործոնը միջազգային
հարաբերություններում և արաբական գարունը /21-րդ դարի սկիզբ/: **Թեմա 12**՝
Իսլամական համագործակցություն կազմակերպությունը և Ղարաբաղյան
հակամարտությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի
գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա,
յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M11. Քրիստոնյա Արևելքի պատմության և աղբյուրագիտության ներածություն (3 կրեդիտ)

Շարքթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ Քրիստոնեական կրոնի
հիմքում Սուրբ գրքերի ստեղծման պատմության, դավանաբանության մեջ դրանց
խաղացած դերի և նշանակության մասին: Կառնչվեն նաև միջնադարում եկեղեցու
դերի և եկեղեցական կյանքի հետազոտության հիմնական սկզբունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կառնչվի** Մերձավոր Արևելքի հիմնական քրիստոնեական եկեղեցիների
պատմության հետ, ինչպես նաև ծանոթացնել նրանց մշակութային
ժառանգությանը,

2. **պատկերացում** կունենա Տիեզերական եկեղեցու կազմակերպման, նրա
նվիրապետական կառույցի ստեղծումն, ինչպես նաև Տիեզերական եկեղեցու
բաժանման համառոտ պատմության մասին,

3. **կծանոթանա** աղբյուրագիտական դիսցիպլիններին,

4. **կկարողանա** արժևորել Մերձավոր Արևելքի միջնադարյան քրիստո-
նեական մշակույթի նշանակությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առարկայի ժամանակագրական սահմանները. միջնադարյան
քրիստոնեական մշակույթի հիմնական չափորոշիչները: **Թեմա 2**՝ Մերձավոր
Արևելքի հիմնական քրիստոնեական եկեղեցիները, նրանց մշակութային
ժառանգությունը: **Թեմա 3**՝ Ս.Գրքի Յոթանասից թարգմանությունը և Մեռյալ ծովի
(Կումրանյան) քարանձավների ձեռագրերը: **Թեմա 4**՝ Աստվածաշնչի Որոգինեսյան
Վեցիջյան (Ութիջյան, Քառիջյան) բնագիրը և քրիստոնեական հետագա
խմբագրությունները. երկու կանոն: **Թեմա 5**՝ Աստվածաշնչի և ավետարանների
գիտական հետազոտությունը. Համաբարբառային գրականություն: **Թեմա 6**՝
Բնագրական համաբարբառներից անցումը թվային կարգի, ապա՝ բառարանային
համաբարբառի: **Թեմա 7**՝ Մերձավոր Արևելքի կրոնադավանաբանական

իրավիճակը Ա դարում և քրիստոնեության հաղթանակի պատճառները: **Թեմա 8**՝ Առաքելական շրջանի եկեղեցին և Ա-Դ դարերի հալածանքները քրիստոնեության դեմ. Սրբախոսական գրականություն: **Թեմա 9**՝ Եկեղեցու հոգևոր աստիճանների առաջացումը. Ծիսական գրքերի առաջացումը: **Թեմա 10**՝ Տիեզերական եկեղեցու կազմակերպումը. Ալեքսանդրյան և Անտիոքյան դպրոցներ: **Թեմա 11**՝ Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցի ստեղծումը: **Թեմա 12**՝ Եկեղեցական ժողով հասկացությունը. կանոնական ժողովածուներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M12. Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմության հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմության օրինակների: Ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ, սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզումների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա որոշակի ժամանակաշրջանում Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը որոշող կարևորագույն գործընթացները,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր շրջանի պատմություն առարկայի օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, հատկապես համաշխարհային պատմական զարգացումներում. կպատկերացնեն պատմական զարգացման հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անգլիական հեղափոխությունը: *Թեմա 2*՝ ԱՄՆ-ի կազմավորումը: *Թեմա 3*՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը; *Թեմա 4*՝ Նապոլեոնյան կայսրության կազմավորումը և անկումը: *Թեմա 5*՝ Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: *Թեմա 6*՝ Գերմանիայի միավորումը: Գերմանական կայսրության առաջացումը: *Թեմա 7*՝ Իտալական միացյալ պետության առաջացումը: *Թեմա 8*՝ Ավստրիան 19-րդ դարի 1-ին կեսին: Ավստրոհունգարական կայսրության ստեղծումը: *Թեմա 9*՝ Արևելյան ճգնաժամը: Բեռլինի վեհաժողովը: *Թեմա 10*՝ Առաջին աշխարհամարտի պատճառները և սկիզբը: *Թեմա 11*՝ Առաջին աշխարհամարտի ավարտը և արդյունքները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M01. Իսլամական քաղաքակրթության ուրվագծեր (միջնադար) (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին իրազեկ դարձնել համաշխարհային կրոններից ամենաերիտասարդի՝ իսլամի ստեղծման, կայացման և հետագա զարգացման կարևոր փուլերին: Իսլամը 14 դար ուղեկցում է համաշխարհային քաղաքակրթությանը և այսօր մեզ է ներկայանում որպես գաղափարական, քաղաքական և ռազմական ուժ: Այդ է պատճառը, որ դասընթացը խնդիր է դնում ուսանողին ճանաչելի դարձնել դասական իսլամի աղբյուրները, ուղղությունները, օրենքները, սովորույթները, իրավունքը, ծեսերը, ավանդույթները, նորմերը և այլն: Կարևոր է ուսանողին ծանոթացնել դասական, ժամանակակից և հայրենական իսլամագիտության հիմնական գրականությանը և աղբյուրներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիմանա** իսլամական քաղաքակրթության ստեղծման, կայացման և հետագա զարգացման կարևոր փուլերը, Իսլամական աշխարհի և այլ քաղաքակրթությունների հարաբերությունները,

2. **կկարողանա** հասկանալ այդ շրջանում իսլամական քաղաքակրթության պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները, հաղթանակների և նվաճումների պատճառները,

3. **կտիրապետի** համաշխարհային բազմաթիվ հակամարտությունների, ռազմական միջամտությունների, դիվանագիտական քայլերի ճշմարիտ էության ու իրական հենքի խնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իսլամական քաղաքակրթությունը որպես պատմամշակութային ֆենոմեն: *Թեմա 2*՝ Արաբական թերակղզին մոնոթեիզմի շեմին: *Թեմա 3*՝ Մարգարեության ֆենոմենը Արաբիայում: *Թեմա 4*՝ Ղուրանը որպես հոգևոր, պատմական, գրական, հուշարձան: *Թեմա 5*՝ Իսլամի գաղափարախոսական

համակարգը: **Թեմա 6** Գլխավոր տոները. սգի օրերը. պաշտամունքային արարողակարգը: Դաշինքները: **Թեմա 7**՝ Արաբական խալիֆաթի ձևավորումը և կայացումը: **Թեմա 8**՝ Իսլամը և հայերը: **Թեմա 9**՝ Իրանը իսլամական քաղաքակրթության համատեքստում: **Թեմա 10**՝ Իսլամական գաղափարախոսության կրոնա-փիլիսոփայական զարգացումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմարը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M07. Հին արևելյան առասպելաբանություն և դիցաբանություն (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել Հին Արևելքի առասպելաբանություն առարկայի նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուսումնասիրության մեթոդների, ինչպես նաև կրոնական մտածողության զարգացման փուլերի, տարբեր հին արևելյան ժողովուրդների մոտ դրանց դրսևորումների, և նրանց մոտ ձևավորված տարբեր կրոնական համակարգերի ընդհանրությունների, օրինաչափությունների ու առանձնահատկությունների մասին:

Դասընթացն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր գործունեության ընթացքում Հին Արևելյան առասպելաբանության և Հին աշխարհի մարդու հոգեբանության և աշխարհընկալման մասին ձեռք բերած գիտելիքները համակցելու և տեղին կիրառելու ընդհանրապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմությանը վերաբերող իր ուսումնասիրություններում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա Հին Արևելքի առասպելաբանության մասին որպես գիտության, ուսումնասիրման առարկան, խնդիրները,

2. կկարողանա իրականացնել

2.ինքնուրույն համեմատություն՝ տարբեր հինարևելյան առասպելաբանական համակարգերի և դիցարանների միջև, բնութագրել հին Արևելյան մարդու առասպելաբանական մտածողության հիմնական առանձնահատկությունները:

2.2 Կրոնական մտածողության և տարբեր հինարևելյան դիցարանների զարգացման փուլերը: Մեկնաբանել՝ տարբեր հինարևելյան դիցարաններում և առասպելաբանություններում առկա կերպարային և կառուցվածքային ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

3. կսիրապետի հին Արևելյան առասպելաբանության ու դիցաբանության վերաբերյալ համապարփակ գիտելիքների՝ կրոնական մտածողության վաղագույն փուլերից սկսած մինչև կանոնակարգված, հստակ հիերարխիայով դիցարանի

ձևավորումը: Մոնոթեիստական կրոնների ձևավորման նախադեպերի և նախադրյալների վերաբերյալ գիտելիքների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ինչ է առասպելաբանությունը, ընդհանուր պատկերացում կրոնական մտածողության վաղագույն ձևերի մասին: **Թեմա 2՝** Առասպելաբանական հիմնական սյուժեներն ու մոտիվները, ընդհանուր պատկերացում հին արևելյան դիցարանների կառուցվածքի մասին: **Թեմա 3՝** Հին միջագետքյան (շումերական և աքքադական) առասպելաբանություն: **Թեմա 4՝** Գիլգամեշ էպոսը: **Թեմա 5՝** Եգիպտական առասպելաբանություն: **Թեմա 6՝** Արևապաշտությունը Եգիպտոսում որպես միաստվածության ուրույն դրսևորում: **Թեմա 7՝** Խեթական առասպելաբանությունը և նրա առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Խուրիական առասպելաբանությունը: **Թեմա 9՝** Հին իրանական առասպելաբանությունը և միաստվածության դրսևորումները իրանական կրոնում: **Թեմա 10՝** Հայ և իրանական առասպելաբանությունների ընդհանրությունները և հայեցակարգային տարբերությունները: **Թեմա 11՝** Արևմտասեմական կամ քանանեական առասպելաբանություն: **Թեմա 12՝** Յահվեի պաշտամունքը և միաստվածությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M08. Միջին դարերի պատմության տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ միջնադարի պատմության համեմատական ուսումնասիրման: Անհրաժեշտ է ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ստեղծման ընթացքում, մագիստրանտների մոտ ձևավորել արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների զգացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա Միջին դարերի պատմության առարկայի նպատակը և ինդիքները, առարկայի տեղը պատմագիտության համակարգում, դրա կապը այլ գիտությունների հետ, միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման և կայացման գործընթացը, քաղաքակրթական հիմնական արժեքները,

2. կկարողանա Կիրառել միջին դարերի պատմության ուսումնասիրման մեթոդները պատմագիտական հետազոտություններում կիրառել, գիտակցել ընդհանուր և մասնավոր գործընթացները և դրանց փոխկապակցվածությունը, տեղայնացնել համաշխարհային պատմական գործընթացները,

3. կտիրապետի Միջին դարերի պատմության հետազոտման մեթոդներին, քաղաքակրթական արժեքներին և գործընթացներին:

Բովանդակությունը.

Թեմա 1 Համաշխարհային քաղաքակրթությունը հին աշխարհի ավարտին:
Թեմա 2՝ Քաղաքակրթական կենտրոն - բարբարոսական ծայրագավառ փոխհարաբերությունների զարգացման դինամիկան: *Թեմա 3*՝ Հին աշխարհից միջնադարին անցման գործընթացի քաղաքական և սոցիալական բովանդակությունը: *Թեմա 4*՝ Եվրոպան Արևմտյան Հռոմեական կայսրությունից հետո: *Թեմա 5*՝ Եվրոպայի սոցիալական միջավայրը: *Թեմա 6*՝ Եվրոպայի քաղաքական միջավայրը: *Թեմա 7*՝ Միջնադարի արևելյան մոդելները: *Թեմա 8*՝ Մինչկոլումբոսյան Ամերիկան: *Թեմա 9*՝ Աֆրիկյան քաղաքակրթությունները: *Թեմա 10*՝ Կրոնական գործոնը միջնադարյան քաղաքակրթություններում: *Թեմա 11*՝ Գիտակրթական համակարգը միջնադարում: *Թեմա 12*՝ Միջնադարի ավարտը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M10. Համաշխարհայնացման գործընթացը. քաղաքական ասպեկտ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհայնացման գործընթացի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին: Ձեռք բերել մեր օրերում մարդկային հասարակության համաշխարհայնացման քաղաքական ասպեկտների այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են կատարում ներկայիս աշխարհում տեղի ունեցող քաղաքակրթական բաբախումների պայմաններում: Նպաստել սովորողների մոտ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորմանը, ինչպես նաև աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա համաշխարհայնացման գործընթացի և նրա քաղաքական ասպեկտների առանձնահատկությունները,

2. կկարողանա հասկանալ այդ գործընթացի պայմաններում առաջացնող հիմնախնդիրների առաջնահերթությունները,

3. կտիրապետի համաշխարհայնացման գործընթացի և նրա քաղաքական ասպեկտների օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, կպատկերացնի համաշխարհայնացման գործընթացի հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ի՞նչ է համաշխարհայնացումը: **Թեմա 2**՝ Համաշխարհայնացումը և ժամանակից աշխարհը: **Թեմա 3**՝ Համաշխարհայնացման տեսության խնդիրները: **Թեմա 4**՝ Համաշխարհայնացումը և լրատվությունը: **Թեմա 5**՝ Համաշխարհայնացումը և կրոնը: **Թեմա 6**՝ Համաշխարհայնացումը և մշակույթը: **Թեմա 7**՝ Հակազրբալիզացիա-այլընտրանքային գլոբալիզացիա: **Թեմա 8**՝ Համաշխարհայնացում և գաղափարախոսություն: **Թեմա 9**՝ Տեղեկատվական պատերազմները գլոբալիզացիայի շրջանում: **Թեմա 10**՝ Համաշխարհայնացումը և Հայաստանը: **Թեմա 11**՝ Համաշխարհայնացումը և Հայոց Մփյոռքը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M13. Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն պատմության հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն պատմության օրինակների: Ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ, սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա որոշակի ժամանակաշրջանում Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը որոշող կարևորագույն գործընթացները,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն շրջանի պատմությունն առարկայի օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, հատկապես համաշխարհային պատմական զարգացումներում. կպատկերացնեն պատմական զարգացման հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: *Թեմա 2*՝ Մեծ Բրիտանիան 1919-1939 թթ.: *Թեմա 3*՝ Ֆրանսիան 1919-1939 թթ.: *Թեմա 4*՝ ԱՄՆ-ը 1919-1939 թթ.: *Թեմա 5*՝ Իտալիան 1919-1939 թթ.: *Թեմա 6*՝ Գերմանիան 1919-1939 թթ.: *Թեմա 7*՝ Երկրորդ աշխարհամարտի սկիզբը: Պատերազմի առաջին փուլը (1939-1941 թթ.): *Թեմա 8*՝ Խորհրդային Միության Հայրենական Մեծ պատերազմը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը: *Թեմա 9*՝ Աշխարհը հետպատերազմյան շրջանում: Երկու համակարգերի ձևավորումը: *Թեմա 10*՝ ԽՍՀՄ-ը 1980-ական թթ.: ԽՍՀՄ փլուզումը և ԱՊՀ առաջացումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմարը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M14. Կովկասագիտության ներածություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել Կովկասի պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին: Ձեռք բերել Կովկասի զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել տարածաշրջանի նվաճումների ձեռքբերման մեջ, սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորման, Կովկասի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա որոշակի ժամանակաշրջանում Կովկասի պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը որոշող կարևորագույն գործընթացները,

2. կարողանա հասկանալ այդ շրջանում Կովկասյան ժողովուրդների պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի Կովկասի նոր և նորագույն շրջանի պատմություն օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, հատկապես համաշխարհային պատմական զարգացումներում. կպատկերացնեն Կովկասի ու կովկասագիտության արդիական խնդիրները, պատմական զարգացման հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կովկասի պատմության հիմնական փուլերը: *Թեմա 2*՝ Կովկասի էթնո-լեզվական պատկերը: *Թեմա 3*՝ Հյուսիսկովկասյան ժողովուրդների հասարակական կարգն ու մշակույթը: *Թեմա 4*՝ Կովկասի պատմության ուսումնասիրության նշանակությունը հայագիտության համար: *Թեմա 5*՝ Կովկասագիտության ձևավորման գործընթացը: *Թեմա 6*՝ Կովկասի պատմության հունա-հռոմեական սկզբնաղբյուրները և նրանց նշանակությունը Կովկասյան Աղվանքի պատմության ուսումնասիրման համար: *Թեմա 7*՝ Կովկասի պատմության հայկական և վրացական աղբյուրները: *Թեմա 8*՝ Կովկասի պատմության արևելյան աղբյուրները: *Թեմա 9*՝ Կովկասյան պատերազմը 19-րդ դարում և նրա նշանակությունը կովկասագիտության համար: *Թեմա 10*՝ Կովկասի զարգացումը խորհրդային տարիներին: *Թեմա 11*՝ Ռուսական կովկասագիտությունը 19-20-րդ դդ.: *Թեմա 12*՝ Կովկասագիտության խնդիրները ետխորհրդային ժամանակաշրջանում: *Թեմա 13*՝ Կովկասյան Աղվանք: *Թեմա 14*՝ Կովկասագիտության հայկական դպրոցը: *Թեմա 15*՝ Պատմության կեղծարարությունները և կովկասագիտության խնդիրները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M15. Բյուզանդիայի պատմության հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ պատկերացում ձևավորել միջնադարյան քաղաքակրթություններից ամենափայլուն օրինակներից մեկի՝ Բյուզանդական կայսրության պատմության և մատենագրության մասին: Ծանոթացնել այդ պետության պատմության և մշակույթի հետազոտության խնդիրների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

- 1.1 Բյուզանդագիտության հիմնախնդիրները,
- 1.2 Բյուզանդիայի պատմության հիմնական էտապները,
- 1.3 Բյուզանդական մշակութային շարժման տենդենցները,
- 1.4 Քրիստոնյա Արևելքի հետ նրան կապող թելերը,

2. կկարողանա.

2.1 յուրացնել Բյուզանդիայի պատմական փորձը,

2.2 գիտական աշխատանքում օգտագործել բյուզանդական սկզբնաղբ-յուրների վկայությունները,

2.3 բնութագրել Բյուզանդիայի պատմության և մշակույթի հուշարձանները,

3. կտիրապետի

Բյուզանդիայի պատմության և մշակույթի դասավանդման առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բյուզանդիայի պատմության հետազոտության հիմնական խնդիրները: **Թեմա 2**՝ Բյուզանդիայի պատմության պարբերացումը. խնդրի կարևորությունը համաշխարհային պատմագրության տեսանկյունից: **Թեմա 3**՝ Բյուզանդական եկեղեցին, նրա կառուցվածքը և դերը երկրի պատմության մեջ: **Թեմա 4**՝ Բյուզանդական պետության կառուցվածքի և օրենսդրական հիմքի ապահովումը: **Թեմա 5**՝ Բյուզանդական կայսրությունը արաբական խալիֆայության նվաճումների դարաշրջանում: **Թեմա 6**՝ Մակեդոնական հարստությունը և Բյուզանդական ռեկոնկիստան: **Թեմա 7**՝ Բյուզանդական պետության վերակազմավորումը խաչակրաց ռազմարշավների դարաշրջանում: **Թեմա 8**՝ Բյուզանդական կայսրության մասնատման դարաշրջանը (1204-1261 թթ.): **Թեմա 9**՝ Բյուզանդական պատմության վերջին շրջանը: **Թեմա 10**՝ Բյուզանդական մատենագրության հիմնական ժանրերը. պատմագրություն: **Թեմա 11**՝ Բյուզանդիայի պատմության հետազոտման հիմնական գործիքները: **Թեմա 12**՝ Բյուզանդիայի պատմության խաչաձևումը Մերձավոր Արևելքի և Հայաստանի պատմության հետ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M33. Ռուսաստանի պատմության հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ Ռուսաստանի պատմության օրինակների: Ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ, սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզումների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական

զաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա որոշակի ժամանակաշրջանում Ռուսաստանի պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը որոշող կարևորագույն գործընթացները,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում Ռուսաստանի պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի Ռուսաստանի միջին դարերի և նոր շրջանի պատմություն առարկայի օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, հատկապես համաշխարհային պատմական զարգացումներում. կպատկերացնեն պատմական զարգացման հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արևելյան սլավոնները: *Թեմա 2*՝ Կիևյան Ռուսիան: *Թեմա 3*՝ Ռուսիան XIII դարում: *Թեմա 4*՝ Մոսկովյան իշխանությունը և հյուսիս-արևելյան ռուսական հողերի միավորումը: *Թեմա 5*՝ Ռուսական պետությունը XVI դարում: *Թեմա 6*՝ Ռուսական պետությունը XVII դարում: *Թեմա 7*՝ Ռուսաստանը XVIII դարի սկզբին: Պյոտր I Ռոմանով: *Թեմա 8*՝ Ռուսաստանը XVIII դարի II կեսին: Եկատերինա II: *Թեմա 9*՝ Ռուսաստանյան կայսրությունը XIX դարի I կեսին: *Թեմա 10*՝ Ռուսաստանյան կայսրությունը XIX դարի II կեսին: *Թեմա 11*՝ Ռուսաստանյան կայսրությունը XX դարի սկզբին: *Թեմա 12*՝ Ռուսաստանը 1917 թ.: Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M18. Կովկասի քաղաքական պատմության հիմնահարցեր (նոր և նորագույն ժամանակաշրջան) (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին՝ ըստ Կովկասի պատմության օրինակների: Ձեռք բերել մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ, սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորման, աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական

զաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա որոշակի ժամանակաշրջանում Կովկասի պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը որոշող կարևորագույն գործընթացները,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում Կովկասի պատմության հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի Կովկասի նոր և նորագույն շրջանի պատմություն առարկայի օրինաչափություններին, դրանց հետազոտության առարկային և խնդիրներին, հիմնական ուղղություններին, հատկապես համաշխարհային պատմական զարգացումներում. կպատկերացնեն պատմական զարգացման հետագա հնարավոր ընթացքն ու հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկություններ Կովկասի մասին: **Թեմա 2**՝ Կովկասը ցարական Ռուսաստանի տիրապետության շրջանում: **Թեմա 3**՝ Հարավային Կովկասում անկախ պետությունների կազմավորման քաղաքական նախադրյալները (1917 թ. փետրվար –1918 թ. մայիս): **Թեմա 4**՝ Քաղաքական կացությունը Հյուսիսային Կովկասում և Դաղստանում(փետրվար 1917 թ.-մարտ 1921 թ.): **Թեմա 5**՝ Հայաստանի Հանրապետություն (1918 թ. մայիս -1920 թ. դեկտեմբեր): **Թեմա 6**՝ Ադրբեջանական Հանրապետություն (1918 թ. մայիս -1920 թ. ապրիլ): **Թեմա 7**՝ Կրաստանի Դեմոկրատական Հանրապետություն (1918 թ. մայիս -1921 թ. փետրվար): **Թեմա 8**՝ Քաղաքական կացությունն Աբխազիայում և նրա կարգավիճակի հիմնահարցը (1918-1921 թթ.): **Թեմա 9**՝ Խորհրդային Կովկասը 1920 -1930-ական թթ. առաջին կեսին: Ներքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում 1920-ական թթ.: **Թեմա 10**՝ Կովկասը 1936-1980-ական թթ.: **Թեմա 11**՝ Ազգամիջյան հարաբերությունները Կովկասում և հին տարածքային վեճերի վերակենդանացումը ԽՍՀՄ-ի կազմալուծման շրջանում (1989-1991 թթ.): **Թեմա 12**՝ Քաղաքական իրավիճակը Կովկասի երկրներում հետխորհրդային շրջանում (1992-2000 թթ.):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M37. Քրդական հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին համապարփակ գիտելիքներ փոխանցել այսօր Մերձավոր Արևելքի գլոբալ հիմնախնդիրներից մեկի՝ քրդական հարցի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ:

Ծրագրի արդյունքում ուսանողը ձեռք կբերի մասնագիտական գիտելիքը նորացնելու և փոխանցելու, նոր գաղափարներ առաջ քաշելու, գիտելիքի որակի մասին հոգածության, թիմում աշխատելու, նախագիծ պլանավորելու, իրականացնելու և պաշտպանելու ընդհանրական կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա ապագա արևելագետների կողմից քրդական հիմնախնդրի աշխարհաքաղաքական նշանակության իմացությունը ենթադրում է, որ ուսանողները ձեռք կբերեն համապարփակ գիտելիքներ մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող էթնոքաղաքական հակամարտությունների համատեքստում քրդական հիմնախնդրի հանգուցալուծման հեռանկարի և հնարավոր քրդական պետականության տեսլականի վերաբերյալ, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեն տարածաշրջանում դեռևս Առաջին աշխարհամարտից հետո ձևավորված սահմանների նոր վերաձևման՝ պայմանավորված նաև համաշխարհային ուժային կենտրոնների՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի և հետաքրքրությունների հարաճուն զարգացումներով,

2. կկարողանա հասկանալ տարածաշրջանի կոնֆլիկտների և հակասությունների պատճառականության շղթան ու գործոնները, կձանոթանա անվտանգության հիմնախնդիրներին, ինչպես նաև վերլուծել ուժային կենտրոնների դիմակայության պատճառներն ու տարածաշրջանային երկրների վարած քաղաքականության հիմքերը,

3. կտիրապետի տարածաշրջանին առնչվող տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, փաստացի նյութերից օգտվելու տեխնիկային, կկարողանա կիրառել գիտահետազոտական մեթոդներն ու կանոնները: Կպատրաստի թեմային առնչվող զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել քննարկում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քրդական հարցի ձևավորման պատմությունը: **Թեմա 2՝** Քրդական ազգային շարժումներն Իրաքում 1918- 1958թթ.: **Թեմա 3՝** Քրդական հիմնախնդիրը Իրանում. 1946 թ.Մեհաբադի Հանրապետություն: **Թեմա 4՝** Քրդերի սոցիալ - քաղաքական վիճակը Իրաքում 1960-90 ական թթ.: **Թեմա 5՝** Քրդական ազգային շարժումները Թուրքիայում 1920-30-ական թթ.: **Թեմա 6՝** Քրդական հարցը Թուրքիայում 1940-70- ական թթ.: **Թեմա 7՝** Քրդստանի աշխատավորական կուսակցություն. գործունեություն, նպատակներ, հեռանկարներ: **Թեմա 8՝** Քրդական հարցը ԱԶԿ կառավարման տարիներին (2002-2014 թթ.): **Թեմա 9՝** Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունը, որպես տարածաշրջանային գործոն: **Թեմա 10՝** Քրդական հիմնախնդիրը Սիրիայում. զարգացման նոր հեռանկար:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M36. Կասպիական տարածաշրջանը միջազգային հարաբերությունների համատեքստում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել Կովկասյան-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակության, այստեղ ընթացող քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Դասընթացն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա ապագա արևելագետի կողմից Կովկասյան-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակության իմացությունն ենթադրում է, որ ուսանողները պետք է ունենան խորը գիտելիքներ տարածաշրջանի Կովկասյան-Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակության՝ էներգետիկ, կոմունիկացիոն, ռազմավարական դերի մասին, տարածաշրջանում հիմնական դերակատարների քաղաքականության մասին՝ իմաստավորելով տարածաշրջանում ՀՀ-ի քաղաքականության առաջնահերթությունները,

2. կկարողանա հասկանալ տարածաշրջանի կոնֆլիկտների եւ հակասությունների պատճառականության շղթան ու գործոնները, կծանոթանա անվտանգության հիմնախնդիրներին, ինչպես նաև վերլուծել ուժային կենտրոնների դիմակայության պատճառներն ու տարածաշրջանային երկրների վարած քաղաքականության հիմքերը,

3. կտիրապետի տարածաշրջանին առնչվող տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, փաստացի նյութերից եւ պատշաճ ձևով օգտվելու տեխնիկային, կկիրառեն հետազոտական մեթոդներն ու կանոնները: Կկարողանա պատրաստել թեմային առնչվող գեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել քննարկում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կովկասյան-կասպյան տարածաշրջանը, որպես աշխարհաքաղաքական կառուցվածք: **Թեմա 2՝** Տարածաշրջանի էներգետիկ, տրանսպորտային եւ տարանցիկ համակարգը, անվտանգության հիմնախնդիրները: **Թեմա 3՝** Տարածաշրջանային եւ գլոբալ ուժային կենտրոնների պայքարը Կովկասյան-Կասպիական տարածաշրջանում ազդեցության հաստատման համար (ԱՄՆ, ԵՄ, Չինաստան, Ռուսաստան, Թուրքիա, Իրան): **Թեմա 4՝** ԱՄՆ, ԵՄ քաղաքականությունը Կովկասյան-կասպյան տարածաշրջանում: **Թեմա 5՝** Ռուսաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումներն ու էվոլյուցիա տարածաշրջանում: **Թեմա 6՝** Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) եւ Թուրքիան Կովկասյան-կասպյան տարածաշրջանում. հակազդեցության գործոններ: **Թեմա 7՝** ՌԴ-Չինաստան-Իրան առանցքի աշխարհաքաղաքական շահերն ու ազդեցության ընդլայնման հնարավորությունները Կովկասյան-կասպյան տարածաշրջանում: **Թեմա 8՝** Տարածաշրջանային և միջտարածաշրջանային կազմակերպությունները: **Թեմա 9՝**

Հարավային Կովկասի պետությունների արտաքին քաղաքականության առանձնահատկությունները: Հայաստանի շահերն ու քաղաքականությունը Կովկասյան-կասպյան տարածաշրջանում: *Թեմա 10*՝ Կովկասյան-կասպյան տարածաշրջանը Մեծ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական գործընթացներում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M34. «Մեծ Մերձավոր Արևելքի» վերակառուցման ծրագիրը և արդիականացման գործընթացը Արաբական աշխարհում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեությանը ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել վերջին տասնամյակում “Մեծ Մերձավոր Արևելքում” ընթացող քաղաքական զարգացումների՝ մասնավորապես հասարակական համակարգերի արդիականացմանը և կերպափոխմանն ուղղված շարժումների վերաբերյալ, ներկայացնել հասարակական համակարգերի արդիականացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, արտաքին աշխարհի դիրքորոշումը և նշված գործընթացների ձախողումը:

Դասընթացն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր անհատական գործունեության ընթացքում կկարողանա հետազոտել “Մեծ Մերձավոր Արևելքում” հասարակական և քաղաքական համակարգերի արդիականացման գործընթացների պատմությունը, վերլուծական և համեմատական զուգահեռներ անցկացնել նրանց անցյալի, ներկայի և հավանական ապագայի միջև:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա “Մեծ Մերձավոր Արևելքի”՝ մասնավորապես արաբական աշխարհի քաղաքական զարգացման առանձնահատկությունները, անկախության համար մղված պայքարում ի հայտ եկած տարբեր գաղափարների, որոնց զգալի մասն ունեն հեռահար նպատակներ և միտված էր նաև արաբական հասարակության արդիականացմանը, կիրառել ձեռք բերված գիտելիքները Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունները ուսումնասիրելու և վերլուծելու ընթացքում,

2. կկարողանա իրականացնել վերլուծություններ քաղաքագիտական և միջազգային հարաբերությունների դաշտում՝ մեկնաբանելով առկա իրադրությունը տարածաշրջանում գիտական հիմնավորմամբ, հստակ պատկերացնել արաբական աշխարհի պատմական զարգացման առանձնահատկությունները նոր և նորագույն ժամանակահատվածներում, համեմատական զուգահեռներ

անցկացնել նշված տարածաշրջանի և Այսրկովկասի զարգացման առանձնահատկությունների տարբերությունների և նմանությունների հարցում,

3. կտիրապետի արդիականացման և կերպափոխման տեսությունների “քաղաքագիտական լեզվին”, արաբական աշխարհի նոր և նորագույն ժամանակների հասարակական-քաղաքական զարգացումների առանձնահատկություններին, ունակ կլինի ընկալել և հասկանալ ներկայացրած գիտական նյութը մի շարք այլ գիտական դիսցիպլինների տեսանկյունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արդիականացման և կերպափոխման հասկացությունները ժամանակակից քաղաքագիտության տեսանկյունից: **Թեմա 2**՝ “Մեծ Մերձավոր Արևելք” սահմանումը և աշխարհագրական, քաղաքական, տնտեսական սահմանները: **Թեմա 3**՝ “Արաբական գարուն”-ը և կառավարման համակարգի ժողովրդավարական մոդելի գործածումն թունիսում: **Թեմա 4**՝ “Արաբական գարուն”-ը և կառավարման համակարգի ժողովրդավարական մոդելի գործածումն Եգիպտոսում: **Թեմա 5**՝ “Արաբական գարուն”-ը, “կառավարելի քառսի տեսությունը” և քաղաքական նոր իրադրության ձևավորումն արաբական աշխարհում: **Թեմա 6**՝ Արաբական հասարակության արդիականացման հիմնախնդիրն արաբ փիլիսոփաների աշխատություններում /իբն Ռուշդ, իբն Խալդուն և այլք/: **Թեմա 7**՝ Արաբական աշխարհը ազգայնականության և իսլամիզմի ընտրության միջև. Թուրքական հասարակության կառուցման մոդելի կիրարկման փորձը Եգիպտոսում /“չափավոր իսլամիզմի տեսությունը”/: **Թեմա 8**՝ “Արդիականացում և պետության ավարտը” Լիբիայում և Սիրիայում: **Թեմա 9**՝ Արաբական աշխարհի արդիականացումը “սաուդա-քատարական սունիական” տեսլականի կիրարկման ենթատեքստում: **Թեմա 10**՝ Բաղդադի անկումը և “Նոր Մերձավոր Արևելքի” կառուցման ամերիկյան տեսլականը: Պաղեստինյան հարցը արաբական աշխարհի արդիականացման և կերպափոխման համատեքստում: **Թեմա 11**՝ Թուրքական գործոնը “արդիականացվող արաբական” աշխարհում”

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Շարքատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

01/M22. Արաբա-թուրքական հարաբերությունները 1907-1918 թթ. (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ներկայացնել 1908թ. երիտթուրքական հեղափոխությունից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը ընկած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում տիրող հասարակական-քաղաքական իրավիճակը, արաբա-թուրքական հարաբերությունները, ինչպես նաև այս

շրջանում ձևավորված արաբական ազգայնականության հիմնական նպատակները և խնդիրները: Ամբողջական պատկեր կազմել արաբների և երիտթուրքերի միջև հարաբերությունների և Օսմանյան կայսրությունում արաբական շարժմանն առնչվող հիմնախնդիրների, արաբ ժողովրդի ազգային պայքարի ընթացքի և զարգացման վերաբերյալ: Քննարկել արաբա-թուրքական հարաբերությունների և արաբական ազգայնական շարժման համատեքստում օսմանիզմի և արաբիզմի՝ միմյանցից հակադիր գաղափարախոսությունների համատեղ առկայության կարևոր խնդիրը, որը մեծապես ազդել է վերոհիշյալ գործընթացների վրա: Ապահովել գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որոնք հնարավորություն կտան ճշգրիտ ընկալելու, հասկանալու այս ժամանակաշրջանի արաբա-թուրքական հարաբերությունների զարգացման ընթացքը, (թուրքական իշխանություններին լոյալ վերաբերմունքից մինչև բացահայտ թշնամանք) արաբական ազգային գաղափարախոսության էվոլյուցիան, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում և նրա տարածքներից դուրս ստեղծված արաբական ազգային կազմակերպությունների, կուսակցությունների և խմբավորումների գործունեությունն ու նպատակները, որոնք անմիջական ազդեցություն են ունեցել արաբական-ազատագրական պայքարի ձևավորման և նրա հետագա զարգացման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա ուսումնասիրվող ժամանակաշրջանում արաբա-թուրքական հարաբերությունների, արաբական ազգայնականության և արաբական ազգային-ազատագրական շարժման զարգացման ընթացքը և ուղղվածությունը,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում արաբական երկրների պատմության հիմնախնդիրները, վերլուծել և ճիշտ գնահատել ուսումնասիրվող երկրներում տեղի ունեցող իրադարձությունները և նրանց առանձնահատկությունները,

3. կտիրապետի ուսումնասիրվող Օսմանյան կայսրության, հատկապես արաբական վիլայեթների հասարակական, քաղաքական իրավիճակին, այն քաղաքականությանը, որը վարում էին երիտթուրքերը կայսրությունում բնակվող ոչ թուրք ազգերի նկատմամբ, այս շրջանում արաբա-թուրքական հարաբերությունների ողջ ընթացքին, ինչպես նաև այն դրդապատճառներին ու գործոններին, որոնք մեծապես ազդեցի Օսմանյան կայսրության նկատմամբ արաբների վերաբերմունքի փոփոխությանը: Բացի այդ ուսանողները կտիրապետեն տվյալ պատմական շրջանում արաբական ազգային գաղափարախոսության ձևավորմանը իր առանձնահատկություններով և յուրահատկություններով: Դրա հետ մեկտեղ կկարողանան ճիշտ վերլուծել ու ընկալել արաբա-թուրքական հարաբերությունների էությունը, արաբ ազգային գործիչների, կուսակցությունների և կազմակերպությունների հետապնդած նպատակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արաբական հասարակությունը երիտթուրքական հեղափոխության նախօրյակին: **Թեմա 2՝** Երիտթուրքական հեղափոխության հաղթանակը. «Արաբա-օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը: **Թեմա 3՝** 1908 թ. խորհրդարանական ընտրությունները և արաբ պատգամավորների գործունեությունը: **Թեմա 4՝** «1909 թ. մարտի 31-ի» դեպքերը ր արաբա-թուրքական հակասությունների ի հայտ գալը: **Թեմա 5՝** Նոր սերնդի արաբական կազմակերպություններ: **Թեմա 6՝** Արաբական գործոն համաօսմանյան

ընդդիմադիր կազմակերպությունների գործունեության համատեքստում: **Թեմա 7'** Թուրք-իտալական պատերազմը և նրա ազդեցությունը արաբա-թուրքական հարաբերությունների վրա: **Թեմա 8'** «Հուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությունը և արաբերը: **Թեմա 9'** «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը» և բարեփոխումների շարժումը արաբական վիլայեթներում: **Թեմա 10'** Առաջին արաբական կոնգրեսը և նրա հետևանքները: **Թեմա 11'** «Ալ-Ահդ» կազմակերպությունը: Իրադրությունը արաբական վիլայեթներում Առաջին աշխարհամարտի նախօրեին: **Թեմա 12'** Առաջին համաշխարհային պատերազմ և արաբների դիրքորոշումը: **Թեմա 13'** Արաբական Մեծ ապստամբություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M25. Արաբական երկրների պայքարը անկախության նվաճման համար (1918-1946 թթ.) (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

ներկայացնել Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում 20-րդ դարի առաջին կեսին ստեղծված աշխարհաքաղաքական դրությունը,

ամբողջական պատկեր կազմել այն կարևորագույն իրադարձությունների մասին, որոնք տեղի ունեցան այս տարածաշրջանում և նպաստեցին արաբական երկրների անկախության ձեռքբերման համար, ինչպես նաև ծանոթանալ այս ժամանակաշրջանում արևմտյան պետությունների վարած մերձավորարևելյան քաղաքականության հետ, ինչն իր անմիջական ազդեցությունն էր ունենում արաբական աշխարհում տեղի ունեցող գործընթացների վրա,

ուսանողների մոտ ապահովել գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որոնք հնարավորություն կտան տեսնելու 20-րդ դարում աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և արաբական երկրների միջև գոյություն ունեցող կապը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա ուսումնասիրվող ժամանակաշրջանում արաբական երկրների անկախության և ինքնավարության ձեռքբերման պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը,

2. կկարողանա հասկանալ այդ շրջանում արաբական երկրների պատմության հիմնախնդիրները, վերլուծել և ճիշտ գնահատել ուսումնասիրվող երկրներում տեղի ունեցող իրադարձությունները և նրանց առանձնահատկությունները,

3. կսիրապետի ուսումնասիրվող Արաբական երկրների ներքին սոցիալ-քաղաքական իրավիճակին, այն քաղաքականությանը, որը վարում էին արևմտյան պետությունները, հատկապես Անգլիան և Ֆրանսիան, իրենց հովանավորության,

հսկողության տակ գնվող երկրներում, ինչպես նաև այն դրդապատճառներին, որոնք նախորդում էին նշված ժամանակաշրջանում իրականացրած բազմաթիվ հեղափոխություններին, հեղաշրջումներին, ժողովրդական ու հակազաղութային ապստամբություններին: Բացի այդ ուսանողները կտիրապետեն տվյալ պատմական շրջանի միջարաբական հարաբերություններին, իրենց առանձնահատկություններով և յուրահատկություններով և այստեղ առկա խնդիրներին: Դրա հետ մեկտեղ կկարողանան ճիշտ վերլուծել ու ընկալել հետագա տարիների պատմական զարգացման ուղին՝ անմիջական կապ տեսնելով անցյալի և ապագայի պատմական գործընթացների միջև:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միրիան 1918-1920 թթ.: **Թեմա 2՝** Միրիան մանդատի հաստատումից մինչև անկախություն: **Թեմա 3՝** Անդրհորդանան թագավորության ստեղծումը: **Թեմա 4՝** Հորդանանը անկախության առաջին տարիներին: **Թեմա 5՝** Պաղեստինը 1948-1967 թթ.: **Թեմա 6՝** Իրաքը 1918-1932 թթ.: **Թեմա 7՝** Իրաքը 1932-1959 թթ.: **Թեմա 8՝** Քուվեյթը 1918-1961 թթ.: **Թեմա 9՝** Եգիպտոսը 1952-1956 թթ.: **Թեմա 10՝** Եգիպտոսը 1956-1967 թթ.: **Թեմա 11՝** Լիբիան 1939-1969 թթ.: **Թեմա 12՝** Ալժիրը 1939-1962 թթ.: **Թեմա 13՝** Սաուդյան Արաբիայի թագավորության կազմավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

01/M28. Արաբական երկրների պատմության հիմնահարցեր (XX դարի 40-90-կան թթ.) (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Համակողմանի ներկայացնել Մերձավոր Արևելքի արաբական երկրների նորագույն շրջանի պատմության առավել կարևոր և շրջադարձային իրադարձությունները, ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում: Քննարկել այն առանցքային պատմական գործընթացները, որոնք անմիջական ազդեցություն ունեցան ոչ միայն ուսումնասիրվող երկրների վրա, այլև տարածաշրջանային զարգացումների, ինչպես նաև միջարաբական և միջազգային հարաբերությունների վրա: Լուսաբանել հետազոտվող արաբական երկրների վարած արտաքին քաղաքականության հիմնական ասպեկտները, մասնավորաբար, ԱՄՆ-ի հետ նրանց հարաբերությունների ընթացքը՝ մերձավորարևելյան հակամարտությունների համատեքստում: Ուսումնասիրել արաբական մի շարք երկրներում հաստատված կառավարման համակարգի առանձնահատկությունները, այդ երկրների ղեկավարների պատասխանատվությունը և նրանց ազդեցությունը քաղաքական, սոցիալական, հասարակական կյանքի վրա: Ապահովել գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որը հնարավորություն կտա տիրապետելու Մերձավոր Արևելքի արաբական

երկրներում տեղի ունեցող հիմնարար գործընթացներին և այն պայմանավորող տարբեր հանգամանքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արաբական աշխարհում տեղի ունացած կարևորագույն իրադարձությունների պատճառները և ուղղվածությունը,

2. կկարողանա ճիշտ ընկալել, վերլուծել, մեկնաբանել արաբական երկրների պատմության այս կարևոր ժամանակաշրջանի միջարաբական հարաբերությունների առանձնահատկությունները, արաբական երկրների համար առանցքային նշանակություն ունեցող գործոնները,

3. կտիրապետի ուսումնասիրվող Արաբական երկրների վարած արտաքին քաղաքականության ուղղվածությանը, արևմտյան երկրների հատկապես ԱՄՆ-ի հետ նրանց հարաբերություններին: Բացի այդ ուսանողները կտիրապետեն մերձավորարևելյան, մասնավորաբար, արաբա-իսրայելական հակամարտության այս ժամանակաշրջանի զարգացումներին: Դրա հետ մեկ տեղ կկարողանան ճիշտ վերլուծել ու ընկալել հետագա տարիների պատմական զարգացման ուղին, անմիջական կապ տեսնելով անցյալի և ապագայի պատմական գործընթացների միջև:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սիրիայի հարաբերությունները արաբական երկրների հետ և տարածաշրջանային համագործակցությունը: **Թեմա 2՝** Սիրիայի հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին տարիներին: **Թեմա 3՝** Քեմալիզմի համաձայնագրերն ու եզրկապա-իսրայելական հաշտության պայմանագիրը: **Թեմա 4՝** Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա: **Թեմա 5՝** Օոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդ: **Թեմա 6՝** Բանակի դերը Մերձավոր Արևելքի արաբական երկրներում: **Թեմա 7՝** Նավթային գործոն: **Թեմա 8՝** Մերձավոր Արևելքի արաբական երկրների հարաբերությունները Խորհրդային միության հետ հետ: **Թեմա 9՝** Եզրկապտուր Հոսնի Մուբարաքի կառավարման օրոք: **Թեմա 10՝** ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք և դրա ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա: **Թեմա 11՝** Լիբանանի ներքաղաքական իրավիճակը 21 դ. սկզբին: **Թեմա 12՝** Մերձավոր Արևելքը Արաբական զարնան նախօրեին: **Թեմա 13՝** Միացյալ Նահանգների և Ռուսաստանի դաշնության վարած քաղաքականությունը Մերձավոր Արևելքում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱԳԻՍՏՐՈՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ « _____ »

Ուսանող _____ Ընդունվել է մագիստրատուրա

 _____ ազգանուն _____, 20__ թ.

 _____ անուն, հայրանուն _____

Նախորդ որակավորումը _____ Շնորհված նախորդ որակավորումը

 _____ մասնագիտությունը _____

 _____ մասնագիտացումը _____, 20__ թ.

 _____ ավարտած բուհը _____

Մագիստրոսական _____ «Շնորհված է մագիստրոսի որակավորում»:

 _____ մասնագիտությունը _____, 20__ թ.

 _____ մասնագիտացումը _____

«Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը ստուգված է»:

Ուսումնական խորհրդատու՝ _____ Ծրագրի ղեկավար՝ _____

 _____ ազգանուն, անուն, գիտ.աստ., կոչում _____ ազգանուն, անուն, գիտ.աստ., կոչում

 _____ ստորագրություն _____ ստորագրություն
 _____, 20__ թ. _____, 20__ թ.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ (72 կրեդիտ)					
Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ			(6 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում			3		Ա
Մասնագիտության փիլիսոփայական հարցեր			3		Ա
Լրացական դասընթացներ			(0 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի
Անգլերեն			0		Ա
Տիրոջսային ծրագրի պարտադիր դասընթացներ			(48 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____

Մագիստրոսի կրթական ծրագիրը Գրանցման № _____ « » _____ 20 թ.

Անձնական համար	Ազգանուն անուն հայրանուն
ՄՏԱ080212029	Ավանեյան Ռեզինա Համլետի
Մասնագիտություն (մասնագիտացում)	
080200 Կառավարում	

1-ին կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2014 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ 1	-	Ստ.	-
05/M02	Տեղեկատ. տեխն. մասնագիտ. հետազոտություններում	3	Լավ	15
16/M01	Մասնագիտ. արդի հիմնախնդ., փիլիսոփ. հարցեր	3	Լավ	15
XX/MXX	Դասընթաց – 1	3	Բավ.	10
XX/MXX	Դասընթաց – 2	3	Բավ.	11
XX/MXX	Դասընթաց – 3	3	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 4	4	Բավ.	10
XX/MXX	Դասընթաց – 5	4	Լավ	13
XX/MXX	Դասընթաց – 6	4	Լավ	17
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 1	3	Ստ.	-
Գումարային կրեդիտներ		30	Գնահատված կրեդիտներ	
		30	27	
		Վարկանիշային միավորներ		Կիսամյակային ՄՈԳ
		370		13.70

Ընդհանրացված արդյունքները 2014 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
30	27	370	13.70

2-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2015 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ 2	-	Ստ.	-
XX/MXX	Դասընթաց – 7	3	Լավ	17
XX/MXX	Դասընթաց – 8	3	Բավ.	8
XX/MXX	Դասընթաց – 9	3	Գեր.	20
XX/MXX	Դասընթաց – 10	4	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 11	3	Լավ	13
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 2	3	Ստ.	-
XX/MXX	Դասընթաց – 12	4	Բավ.	8
XX/MXX	Դասընթաց – 13	4	Լավ	14
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 1	3	Ստ.	-
Գումարային կրեդիտներ		30	Գնահատված կրեդիտներ	
		30	27	
		Վարկանիշային միավորներ		Կիսամյակային ՄՈԳ
		370		13.70

30	24	338	14.08
----	----	-----	-------

Ընդհանրացված արդյունքները 2015 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
60	51	708	13.88

3-րդ կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2015 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XX/MXX	Դասընթաց – 14	3	Գեր.	18
XX/MXX	Դասընթաց – 15	3	Լավ	17
XX/MXX	Դասընթաց – 16	3	Լավ	16
XX/MXX	Դասընթաց – 17	3	Լավ	15
XX/MXX	Դասընթաց – 18	3	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 19	3	Բավ.	9
XX/MXX	Դասընթաց – 20	3	Լավ	13
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 3	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 2	6	Ստ.	-
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	21	321	15.29	

Ընդհանրացված արդյունքները 2015 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
90	72	1029	14.29

4-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2016 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XX/MXX	Գիտական ղեկավարի սեմինար 4	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական պրակտիկա	3	Ստ.	-
XX/MXX	Գիտամանկավարժական պրակտիկա	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 3	9	Ստ.	-
XX/MXX	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	Գեր.	18
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	12	216	18.00	

Ընդհանրացված արդյունքները 2016 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
120	84	1245	14.82

Ամփոփիչ արդյունքներ

Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Արդյունարար վարկանիշային միավորներ	Արդյունարար ՄՈԳ
120	84	1245	14.82

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՎԵՐՁԸ
ԱՆՎԱՎԵՐ Է ԱՌԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԿՆԻՔԻ

Տեսուչ _____

Ամբիոնի վարիչ _____

Ուս. մասի պետ _____

ՀՀ ԳԱՍ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
Մագիստրոսական թեզի պաշտպանություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ուսանող՝
Ազգանուն, անուն, հայրանուն _____
Մասնագիտություն, խումբ _____
Թեզի թեմա _____

Գիտական ղեկավար _____
(ազգանուն, անուն, գիտ. աստ. կոչում)

Անփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝
Ազգանուն, անուն _____
Գիտական աստիճան, կոչում _____
Պաշտոն _____

Թեզի գնահատման արդյունքներն ըստ սահմանված
որակական չափանիշների

Թիվ	Հանձնաժողովի կազմը (ազգանուն, անուն)	Գնահատման միավորն ըստ սահմանված որակական չափանիշների				Ստորագրու- թյուն
		1	2	3	4	
Գնահատման միջին միավորը						

Գնահատման միջին արդյունքներն ըստ որակական չափանիշների

Թիվ	Որակական չափանիշ	Գնահատման միավորի սահմանված չափաքանակը	Գնահատման միջին միավորը	Գումարային միավորը	Գնահատ ականը
1	Արդիականությունը (նորույթ)	6			
2	Ինքնուրույնության աստիճանը	6			
3	Ձևակերպման որակը	4			
4	Ներկայացման որակը	4			

Գնահատականն ըստ գումարային միավորի

Գումարային միավորը	
Գնահատականը	

Անփոփիչ ատեստավորման հանձնաժողովը որոշում է՝
Մագիստրոսի որակավորման աստիճան (դիպլոմ) շնորհելու վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահ _____
(ստորագրություն)

«_____» _____ 2014 թ.